ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ
ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴ
(CQS)

28 սեպտեմբերի 2021թ.

Հայաստանի Հանրապետություն
Ծրագրի անվանումը՝ Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման ծրագիր
Վարկի համարը՝ P148836
Առաջադրանքի անվանում՝ Ամասիա խոշորացված համայնքում ոռոգման համակարգի վերակառուցման աշխատանքների համար անհրաժեշտ նախագծային աշխատանքների և հեղինակային հսկողության իրականացում
Փաթեթի համարը (համաձայն գնումների պլանի)՝ TPD-41

Վերջնաժամկետ՝ 12 հոկտեմբերի, 2021թ.
Հայաստանի Հանրապետության կառավարությունը վարկ է ստացել Համաշխարհային Բանկից (ՀԲ) Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման ծրագրի ֆինանսավորման նպատակով և նախատեսում է օգտագործել այդ միջոցների մի մասը Խորհրդատվական Ծառայությունների՝ **Ամասիա խոշորացված համայնքում ոռոգման համակարգի վերակառուցման աշխատանքների համար անհրաժեշտ նախագծային աշխատանքների և հեղինակային հսկողության իրականացման համար:**
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը («Պատվիրատու») նշված Ծառայություններն իրականացնելու նպատակով հրավիրում է իրավասու խորհրդատվական կազմակերպություններին («Խորհրդատուներ») ներկայացնելու հետաքրքրվածության հայտեր: Նախատեսված ծրագրի նախագծման և հեղինակային հսկողության իրականացման համար կհատկացվեն ֆինանսական միջոցներ տեղական խորհրդատուներին՝ ստորև բերվող աշխատանքների կատարման նպատակով:

Խորհրդատուի հետ կկնքվի երկու առանձին պայմանագիր:
1. Միանվագ - նախագծային աշխատանքների համար
2. Ժամանակի վրա հիմնված - հեղինակային հսկողության համար
Կնքված պայմանագրի սահմաններում կազմակերպությանը կհանձնարարվի նշված ենթածրագրի նախագծման և հեղինակային հսկողության աշխատանքներ:
Պայմանագրերի ստորագրման նախատեսվող ժամկետն է 2021թ. նոյեմբեր: Նախագծային ծառայությունները կմատուցվեն 100 օրացուցային օրվա ընթացքում:

Առաջադրանքի նպատակը. Շիրակի մարզի Ամասիա խոշորացված համայնքի Ամասիա, Արեգնադեմ, Բանդիվան, Բյուրակն, Գտաշեն, Ջրաձոր, Մեղրաշատ և Ողջի բնակավայրերի ոռոգումն իրականացվում է «Աջափնյա» ջրանցքից: Բնակավայրերում տարիների ընթացքում քայքայվել, քանդվել և շարքից դուրս է եկել ոռոգման ցանցի մի մասը, որի պատճառով որոշ հողատարածքներ այժմ չեն ոռոգվում: Տրվող ոռոգման ջրի քանակի մի մասը կորում է: Ծրագրով նախատեսվում է Ամասիա համայնքի ութ բնակավայրերի ոռոգման համակարգի վերակառուցում: Վերակառուցման ենթակա ջրագծերի ընդհանուր երկարությունը մոտ 6.7կմ է: Համակարգը նախատեսվում է կառուցել պոլիէթիլենային խողովակներով և ե/բետոնե վաքերով, բոլոր անհրաժեշտ համաձայնեցված տեղերում նախատեսվելու են ջրթողներ ու ջրաչափական հանգույցներ: Ներկայումս համայնքի ոռոքելի տարածքները կազմում են մոտ 1600 հա: Ամասիայում ոռոգելի հողտարածքները կավելանան 21հա-ով, Արեգնադեմ 292հա-ով, Բանդիվան 74հա-ով, Բյուրակն 272հա-ով, Գտաշեն 228հա-ով, Մեղրաշատ 523հա-ով, Ողջի 190հա-ով:

Ընդհանուր ոռոգելի հողտարածքները կավելանան 1600 հա-ով: Համակարգը շահագործում է «Շիրակ»:

Խորհրդատուի գործունեության հիմնական շրջանակներն են՝

1. Ապահովել նախագծի համապատասխանությունը ՀՀ գործող նորմերին, պատվիրատուի պահանջներին, Համաշխարհային Բանկի պահպանության քաղաքականությանը, ներառյալ շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի կառավարման շրջանակին, վերաբնակեցման քաղաքականության շրջանակին և հատուկ բնապահպանական կառավարման պլաններին:
2. Ինժեներաերկրաբանական հետազոտությունների կատարում, նախագծերի մշակում:
3. Օրենքով սահմանված կարգով նախագծի համաձայնեցում:
4. Շինարարության ընթացքում հեղինակային հսկողության իրականացում:

Հետաքրքրված խորհրդատու ընկերությունները պետք է ներկայացնեն հետաքրքրվածության նամակ և տեղեկություններ **(կազմակերպության կանոնադրությունն ու գրանցման վկայականը, հիմնական աշխատակազմի ցանկը, ինչպես նաև նշված որակավորման չափանիշներով սահմանված տեղեկություններ),** որոնք կհավաստեն, որ կազմակերպությունը ունի պահանջվող որակավորում և համապատասխան փորձ վերոհիշյալ ծառայությունները կատարելու համար: **Աշխատակազմի աշխատանքային ինքնակենսագրությունը պետք չի ներկայացնել տվյալ փուլում:**

Ընտրության չափանիշներն են.

Վերջին 5 տարիների ընթացքում.

- Կազմակերպության ընդհանուր փորձառությունը/ոռոգման և/կամ ջրամատակարարման համակարգերի կառուցման և/կամ վերակառուցման նախագծման փորձ/,
- Ոռոգման համակարգերի կառուցման և/կամ վերակառուցման նախագծման փորձ/, յուրաքանչյուր պայմանագրի արժեքը ոչ պակաս քան 2,500,000 ՀՀ դրամ,
- Երկրորդ կետին բավարարող պայմանագրերի արժեքների հանրագումարը:

Հետաքրքրված խորհրդատու ընկերությունների ուշադրությունն ենք հրավիրում Համաշխարհային բանկի ուղեցույցների՝ «Համաշխարհային բանկի փոխառուների կողմից ՎԶՄԲ-ի փոխառությունների և ՄԶԸ-ի վարկերի և դրամաշնորհների շրջանակներում խորհրդատուների ընտրություն և վարձում, հունվար 2011թ., փոփոխված 2014թ.», 1.9 կետի վրա, որով սահմանվում է Համաշխարհային բանկի քաղաքականությունը շահերի բախման վերաբերյալ:
Խորհրդատուի ընտրությունը կիրականացվի Համաշխարհային Բանկի ուղեցույցի՝ «Համաշխարհային բանկի փոխառուների կողմից ՎԶՄԲ-ի փոխառությունների և ՄԶԸ-ի վարկերի և դրամաշնորհների շրջանակներում խորհրդատուների ընտրություն և վարձում, հունվար 2011, փոփոխված 2014թ.» 3.7 կետում սահմանված «Կազմակերպության որակավորման վրա հիմնված ընտրություն» ընթացակարգին համաձայն:
Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ստորև նշված հասցեով աշխատանքային օրերին ժ. 09:00-ից մինչև ժ.17:00-ը:
Հետաքրքրվածության հայտերը պետք է ներկայացվեն առձեռն կամ էլ-փոստով ստորև ներկայացվող հասցեով, ոչ ուշ քան ***2021թ. հոկտեմբերի 12-ը, ժամը 17:00-ը:***

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ,
ՀՀ, ք.Երևան, 0037, Կ. Ուլնեցու 31, ՀՏԶՀ գրասենյակ,
Գնումների բաժին, 406 սենյակ,
Հեռախոսը՝ (374 60) 50-15-60,
Էլ-փոստը՝ procurement@atdf.am: